

ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ) ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
Եկրորդ նիստի 15-րդ գումարմանի արձանագրութիւնները
2022 թ. Սպրիլի 6-ին,
Նիստի սկիզբը ժամը 21:00- աւարտը՝ 22:40:

Ընտրուած 49 պատգամաւորներէն մասնակցած է 15 պատգամաւոր (առցանց միջոցով) :

Ա. Քննարկեցին՝

Օրակարգի միաձայն ընդունելութիւնը:

Բ. Քննարկեցին՝

2022 թուականի Մայիսի 28-ին կայանալիք ԱԺ 7-րդ գումարմանի 2-րդ նստաշրջանի
նախագիծի ներկայացումը:

Կը հաստատուի յաջորդ նիստին:

Գ. Քննարկեցին՝

ԱՀՀ ԱԺ-ի ներքին կանոնակարգի հետ կապուած աշատանքները:

Պահանջեցին Լեոնարտո Պասմաճեանին ներկայացնել հաշուետուութիւն իր ամբողջ
պաշտօնի ընթացքին, յանձնաժողովներու հաշուետուութիւնները,
ձայնագրութիւնները, լիազօրագրութիւնները, փոխանցել աշխարհի խորհրդարաններուն
ուղարկուած նամակները, անոնց պատասխանները,
թղթային աշխատանքները եւ պատգամաւորներու ինքնակենսագրականները, ամբողջ ԱԺ
արխիւը, փոխանցել ԱՀՀ նախագահ Արմենակ Աբրահամեանին, որը որպէս իրաւայաջորդ՝
փաստաթուղթեր կը փոխանցել ԱԺ Նախագահութեան:

Դ. Լսեցին՝

Ներքին կանոնակարգին վերաբերող հարցեր, որտեղ Արտաքին գործերու յանձնաժողովը
պէտք է ներկայացուցած ըլլար հաշուետուութիւն գործունէութեան մասին, սակայն խումբը
յայտարարեց (մասնաւորապէս Գիլերմօ Կարամանեանը) , որ դէռ յանձնաժողովի նախագահ
չէ ընտրուած ուստի նաեւ ուշացուցած է յանձնաժողովի հաշուետուութիւնը:

Ե. Քննարկեցին՝

Ընթացիկ հարցեր Սպրիլ 24-ի միջոցառումներուն հետ կապուած: Լատինական Ամերիկայի
մէջ, որը ներկայացուած է պատգամաւոր Փապլօ
Թայլանեանի եւ Գիլերմօ Կարամանեանի կողմէ:

Քննարկումներ՝


Պատգամաւոր Արա Քէշիշեանը գրաւոր հարցերով դիմած էր ԱԺ
նախագահութեան, ստացաւ բաւարար պատասխան Արեւմտեան
Հայաստանի կառավարութեան վարչապետ Սեդա Մելիքեանի կողմէ:

Զ. Լսեցին՝

Օրակարգէն դուրս հարցեր, որտեղ պատգամաւոր Փապլօ Թայլանեանը
խնդրեց, որ նիստի արձանագրութիւնը հասանելի ըլլայ պատգամաւորներուն:

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

PARLEMENT
D'ARMENIE OCCIDENTALE



PARLIAMENT OF
WESTERN ARMENIA

ПАРЛАМЕНТ
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Անի ՊԵՏԵԻԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար
Նելլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Խորհրդարանի) Ազգային Ժողովի Նախագահ
Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

parliament@western.armenia.eu